17. ԴԵՐՎԻՇԸ ԳՅԻԴԿԱՆ ՁԱՐ, ԱՄՄԱ ԿԼՈՒԽԸ ԵԿԱԾ ԱՐ

Ժուկավ ժամանակավ Ղարաբաղի շնորհկներան մինումը մին դերվիշ ար ապրում։ Մին օր էս դերվիշը ուրան կյիրին եշից, ասից, վեր Ղարաբաղ տասսը տարի ուրուր յրա սով ա իննական։

Մին ամես ար հինչ էգ դերվիշը տանա, կործա ընգած քյուչա-քյուչա ժողովուրթեն ծեն ա տամ, թա.— Ա՛ ժողովուրթ, ծեր թադարեքյը մհենդյանց քշեցեքյ, տասսը տարե սով ա իննական։

Էս խոսկերքը ըսկընալանը ետը ժողովուրթեն վրննը-ծրեռքը տափան կտրում ա։ Սաղ օրը քնենքյ ըն անըմ, էլ ծեռքներավը պեն չի կյա՞մ, թա անին։

Խաբարը տամ ըն Վարանգու Մելիքյ Շահնազարին։ Մելիքյը նստած ար Ավետարանոց շենումը։ Մելիքյին ասում ըն, թա էս թավուր մին մարթ ժողովուրթեն մաչը պրավակացիա յա քցալ, մհենգյ ժողովուրթը պենա, կործա ընգած, սաղ օրը մտածում ա։ Մին օր Մելիքյ Շահնազարը մարթիքյ ա զարկում։ Էտ մարթիքը կյամ ըն դերվիշին յոր օնում, տանում Ավետարանոց։

Մելիքյ Շահնազարը խուսուցնըմ ա դերվիշին, ասըմ.— Հի՞նչու հետե յըս իտի պրավակացիա քցալ ժողովրթեն մաչը։ Տու քանի՞ կըլխանե յը՞ս, վեր իմ ժողովրթեն քընենքյի մաչ ըս քըցալ, իմ էն ազրայիլ ժողովուրթես ազադ մըծացած, աղադ կերածխմած ժողովուրթես։

Դերվիշը պադասխանում ա.— Դե Մելիքյ Շահնազարը ապրած

կենա, կլիրքեն եշալ ըմ, տի յա նշանց տվալ, տի էլ ասալ ըմ, էլ հի՞նչ կը կարիմ ասիմ։

Մելիքյ Շահնազարը դերվիշին պատիժ տալի մհար կանչում ա ուրան իրեք օքնականներեն, հանդամանքը նաղլ անում։

Մհենդ Մելիքյ Շահնազարը սահանց անա հրցնում ա, թա հի՞նչ ռանդյի, հի՞նչ փորմի պատիժ տա դերվիշին։

Սուվթա խոսկը տամ ա առաջին օքնականեն։

Սա եր ա կենում, ասըմ.— Վեր էս դերվիշը էս թաՀրի պրավակացիա յա քցալ մեր աղադ, բոլ-բոլ ապրած ժողովուրթեն մաչը, յըես առաջարկում ըմ էս մարթին տինինք նոր հեմնիյիս պատեն մաչին, պատը հեմնինքյ։

Էս խոսկերքը լսելավ, դերվիշը ետ ա տեռնում թա. — Ասլի հո՞։

Էրկունչի խոսքը Մելիքյ Շահնազարը տամ ա էրկունչի օքնականին։ Սա էլ եր ա կենում խոսում, ետնան առաջարկում ա, վեր դերվիշին ղմաավ շախկա տան, ղինաար-ղինաար կտորին։

Էս դոնում էլ դերվիշը էլա ասում ա.— Ասլի հո՞։

Իրեքինչի խոսկը Մելիքյ Շահնազարը տամ ա իրեքինչի օքնականեն։

Սա էս տեսակ ա խոսում.— Մելիքյ Շահնազարը ապրած կենա, մարթ ա իլի՞, բալքյաս խելքը մին պեն ա կտրալ, վեր տի յա ասալ, յըես ռազի չըմ, վեր էտ մարթին սպանին։ Եկեքյ մին հավուր հաշեվ անինքյ, թա էտ մարթը հաստատ դոուզ ա ասալ, թա լհա կըլխան ա տուս տըվալ, թա լհա կըլխեն ա զոռ տըվա՞լ։ Էն վեր ռայոնում էս տարե շատ պերք ա կյլական, ընդաղան դանը, պերքը տեղափոխինքյ էտ դերվիշին ասած ռայոնը, պահեստնեն դանավ լցնինքյ, եկող տարեն, թա վեր պերքը կկյա՞, վնաս չի կա, իլածեն կլխեն իվլացածան, իլածան վնաս չօնինքյ, չիլածան վնաս օնինքյ։ Թա վեր պերքը կյալ չի՞, էնա լհա մեր պահեստնեն լիդյը կինի՞, ժողովուրթը նեղութուն չի քաշի՞լ։ Բա բալքյիս սով իլավ, էն չախը հո՞ւնց բիդի անինքյ։ Էս մարթը պառավ, քյասիբ մարթ ա, ըզըդեցեքյ քյնա ուրան քյըսրբութունեն։

Էս խոսքերքը լսելանը ետը, դերվիշը իրեքինչի դոնումը ասում ա.— Ասլի հո՞...

Դերվիշին էս իրեք պադասխանը շատ ա զարմացընըմ Մելիքյ Շահնազարին։ Ընդրա հետե դերվիշին անա հրրցընում ա.— Դե՛ր-վիշ, էս էրկու մարթը քյըեզ շատ զոռի ըսպնեցեն, ընդրա մհար ըսեցեր. «Ասլի հո՞», պա էս խեղճ մարթը քյըեզ ըզադից, բիդի քյըեզ խոսից, ընդրան խե՞ ըսեցեր. «Ասլի հո՞»։

Դերվիշը Մելիքյ Շահնազարին պատասխանից.— Մելիքյ Շահնազարն ապրած կենա, խոսկը քունն ա, հինչու օղում ես ըրա, ամմա յըես մին պեն կասիմ քյըեզ, թա վեր սոտ տոնս կյա, գյիդա վեր էն առաչվա ասածըս էլ ա սոտ իննական։ Տու ինձ ճնանչում չը՞ս։

Մելիքյն ասում ա.— Չէ։

Դերվիշըն ասըմ ա.— Ցըես էլ վեչ քյըեզ ըմ ճնանչում, վեչ էտ քու օքնականներետ, վեչ էլ գյանքըմըս Ավետարանոց ընգած ըմ իլա։

Մելիքյ Շահնազարը ռազի յա կենըմ, վեր հվատում ա.— Մհենգյ էն առաչվա հնգյերը, վեր ինձ պատեն մաչին տիրավ հեմնից, նա հայտնի ռիննահու տղա յա։ Ընդրա հարը ինդի լավ ուստա յա իլա, վեր էտ փշակավը շատ հրուստացալ ա, տղեն տասներկու տարե կրթցրալ, մհենգյ քյըեզ օքնական ա։ էն ուրան ումբրումը էտ ա տեսալ, տրա հետե էլ ինձ տինում ա պատեն մաչին հեմնում, ուրեմը ուրան ասլին ա քաշալ։ Տրա հետ էլ ըսեցե «Ասլի հո՞»։ էն էրկունջի հնգյերը, վեր ինձ տվարու մսի մնան շախկա յա տվալ, հայտնի ղսաբու տղա յա։ Ընդրա հարը ղսըրութունավ էնչանք հրստացալ ա, վեր տղեն տասներկու տարե կրթցրալ ա, մհենգյ քյըեզ օքնական ա։ Նա գյանքում միշտ արուն ա տեսալ, ըտրա հետե էլ ինձ ղմավ ա տամ, սպանում։ էն էլ ուրան ասլին ա քաշալ, հինչու տեսալ ա, էն ա աշկեն առաչը կալա, տրա մհար էլ ըսեցե «Ասլի հո՞»։ Ամմա էս իրեքինջի հնգյերը, վեր ինձ ըղադեց, ըտ էլ հայտնի ռանչպարի տղա յա։ Ընդրա հարը էնքան լավ վըղապենու տար ա իլա, էնքան հարուստութուն ա եր կալալ, վըեղան, վեր տղեն տասներկու տարե կրթեցալ ա, վեր ըսոր քու կոխկետ նստած, կարում ա կլոխ տոնս պիրի։ Մհենգյ էտ մարթը գյանքումը արուն տեսած չի։ Տա ըռնու նհետ կործ չենե, ընդրա հետե էլ ուրան հնգյերունցը տեմ ա կաղնալ, ինձ ըղադալ։ էտ էլ ուրան ասլին ա քաշալ, տրա հետե էլ ըսեցե «Ասլի հո՞»։

Էտքանը Մելիքյ Շահնազարը վեր լըսում ա, ասըմ ա.— Դերվիշին ասածը էտ իրեք մարթին անա լոխ դուզ ա։ Ընդրանա ետը յըես ռազի յըմ իմ իրեքինջի օքնականիս խոսկին, վեր դերվիշին ազադինք։

Մելիքյ-Շահնազարը էն մին օրանը ետը սկսից ուրան պագրաստութունը տրեսնալը։ Ետնան դուզ տուս եկավ դերվիշին ասածը։ Շրջանումը էրգյան վախտը սով իլավ, ժողովուրթը նեզութուն քաշից։ Ընդրանա ետը, քանի վեր Մելիքյ Շահնազարը ուրան թադարեքյը շուտվանից քաշալ ար, ժողովուրթն ազադվից սովան։